ծութիւնն բնութեան մերոյ և այլ անխախտելի սահմանաւ եօթն աւուր ժամանակաւ զի կացցէ և մնասցէ և ընթանալով 'ի գործ ըստ Օրինօք և սահմանաւ մինչև 'ի կէտ սահմանի իւրոյ, ուրեմն որքան հարկաւոր մեզ և պարտ 'ի վերայ մեր կայ որ համահաւասար բնութիւնք մեր ճանաչելով փոփոխութիւն բնութեան մերոյ, և տարբերութիւն ժամանակին 'ի յերեսս երկրի ունել անխախտելի յօրէնս, հարկաւոր և յոյժ հարկաւոր է մեզ նախ ընտրել ժամանակն 'ի մէջ բնութեան մերոյ յերբ որ ունիցիմք սիրտ սուրբ և հոգի խոնարհ գթած 'ի վերայ միմեանց ողորմած 'ի վերայ ժամանակին զուր անցանց 'ի վերայ մեր և 'ի վերայ աշխարհին մերոյ ոչ 'ի կամաց մարմնոյ և ոչ վասն շահաւէտութեան յատկապէս անձանց և ոչ կողմնակալութեամբ սիրոյ և նախանձու, ոչ բարեկամի և ոչ թշնամու մի և կամ միւսին կողմն, այլ ամուր աչօք որ ոչ տեսցուք ոչ ոք՝ ոչ հայր ոչ որդի, ոչ մայր, և ոչ քեռ, ոչ հարուստ և ոչ անանկ, ոչ տէր և ոչ ծառայ, ոչ բարեկամ և ոչ թշնամի, թէ ոչ միտս մեր 'ի վեր ընծայելով առաթուր սրբութեան Տեառն արարչին մերոյ անխարանօք խոստովանութեամբ, զի գործ 'ի ձեռաց նորայ եմք 'ի մայրութենէ հողէ և իջուցանելով փքացումն բնական բնութեան մերոյ անասնականի և արիութեամբ ընդունիլ հեզութիւն խոնարհութիւնն զո-